Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «2018 թվականի տեղական վճարի գծով արտոնություններ սահմանելու, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի 24-ի N190-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2017 թվականի փետրվարի 14-ի N 675-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Արայիկ Հարությունյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

2. Մարինա Խաչատրյան- Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Ամփոփիչ էլույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սահմանել, որ.

1) Երևանի ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար 2018 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ գրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե՝

ա. երեխայի օրինական ներկայացուցիչներից մեկը մշտապես կամ փաստացի հաշվառված է Երևան քաղաքում,

բ. երեխայի ծնողը ազատամարտիկ է և (կամ) զոհված ազատամարտիկի ընտանիքի անդամ է.

գ. երեխայի օրինական ներկայացուցիչներից մեկը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր ժամկետային, պայմանագրային և այլ զորքերում պայմանագրային զինվորական ծառայություն են իրականացնում Երևան քաղաքում.

դ. զոհված զինծառայողի երեխա է.

ե. երկկողմանի ծնողագուրկ երեխա է.

զ. սիրիահայի երեխա է.

2) սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում չներառված Երևանի ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար 2018 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, այն սահմանելով՝ 8000 (ութ հազար) դրամ.

3) Եթե Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցների (արտադպրոցական դաստիարակության հաստատություններ) ուսումնական պլանով նախատեսված ծառայություններից օգտվողներն են սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի պարբերություններում նշված անձինք, ապա ծառայություններից օգտվողների համար **2018** թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, դրանք սահմանելով.

ա. խորացված մասնագիտական երգեցողության ուսուցման համար՝ ամսական **8000** (ութ հազար) դրամ.

բ. գործիքային (դաշնամուր, լարային նվագարաններ, փողային և ազգային նվագարաններ, հարվածային գործիքներ, սկորդեոն, տավիղ, կիթառ) բաժիններում ուսուցման համար՝ ամսական **8000** (ութ հազար) դրամ.

գ. երգեցողության ուսուցման համար՝ ամսական **8000** (ութ հազար) դրամ.

դ. պարարվեստի ուսուցման համար՝ ամսական **8000** (ութ հազար) դրամ.

ե. կերպարվեստի ուսուցման համար՝ ամսական **8000** (ութ հազար) դրամ.

զ. սույն ենթակետի «բ» և «գ» պարբերություններում նշված ծառայություններից որևէ մեկով օգտվողները նույն «բ» և «գ» պարբերություններում նշված մեկ այլ ծառայությունից օգտվելու համար ամսական վճարում են **4000** (չորս հազար) դրամ.

4) Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցների (արտադպրոցական դաստիարակության հաստատություններ) ուսումնական պլանով նախատեսված ծառայություններից օգտվողների կողմից մինչև **2018** թվականի հունվարի 1-ը դպրոցներին վճարվող գումարների և **2018** թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի տարբերությունների արդյունքում վճարման խնդիրներ ունեցող մինչև **500** երեխայի հաշվարկով **2018** թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի նկատմամբ կիրառվում է զրոյական դրույքաչափ՝ ծառայություններից օգտվողների օրինական ներկայացուցիչների դիմումի հիման վրա Երևանի քաղաքապետի որոշմամբ սահմանված կարգով.

5) Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցների (արտադպրոցական դաստիարակության հաստատություններ) ուսումնական պլանով նախատեսված ծառայություններից օգտվողների կողմից մինչև **2018** թվականի հունվարի 1-ը դպրոցներին վճարվող գումարների և **2018** թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի տարբերությունների արդյունքում վճարման խնդիրներ և/կամ բարձր առաջադիմություն ունեցող մինչև **400** երեխայի հաշվարկով **2018** թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի նկատմամբ կիրառվում են նվազեցման արտոնություններ՝ դրանք սահմանելով **4000** (չորս հազար) դրամ, ծառայություններից օգտվողների օրինական ներկայացուցիչների դիմումի հիման վրա, Երևանի քաղաքապետի որոշմամբ սահմանված կարգով.

6) Երևանի ենթակայության թանգարանների մուտքի համար **2018** թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման կամ զրոյական դրույքաչափի արտոնություններ, դրանք սահմանելով.

Հ/Հ	Երևանի ենթակայության ՀՈԱԿ-ներ	Մուտքի տոմսի արժեքի տեղական տուրքի չափը		
		դպրոցական	ուսանող	մեծահասակ
1.	Երևան քաղաքի պատմության թանգարան	250 (երկու հարյուր հիսուն) դրամ	250 (երկու հարյուր հիսուն)դրամ	500 (հինգ հարյուր) դրամ
2.	«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան	300 (երեք հարյուր) դրամ	300 (երեք հարյուր) դրամ	1000 (մեկ հազար) դրամ
3.	Ժամանակակից արվեստի թանգարան	500 (հինգ հարյուր) դրամ	500 (հինգ հարյուր) դրամ	500 (հինգ հարյուր) դրամ
4.	Կարեն Դեմիրճյանի թանգարան	0 (զրո) դրամ	0 (զրո)դրամ	0 (զրո) դրամ
5.	Ֆ. Նանսենի թանգարան	0 (զրո)դրամ	0 (զրո) դրամ	0 (զրո) դրամ

7) ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող հանդիսացող և այն ղեկավարող տեղաշարժվելու դժվարություն ունեցող հաշմանդամություն ունեցող անձի կամ այդպիսի հաշմանդամություն ունեցող անձին կամ հաշմանդամություն ունեցող երեխա (այսուհետ՝ հաշմանդամություն ունեցող անձ) փոխադրող տրանսպորտային միջոց ղեկավարող անձանց համար **2018** թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ ազատելով հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից:

8) որպես վառելիք բացառապես էլեկտրաէներգիա օգտագործող և բացառապես էլեկտրական շարժիչով աշխատող ավտոտրանսպորտային միջոցի (էլեկտրամոբիլ) սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող հանդիսացող և այն ղեկավարող անձանց համար **2018** թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ ազատելով հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից:

2. Սույն որոշմամբ նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք են հանդիսանում հետևյալ փաստաթղթերը.

1) 1-ին կետի 1-ին ենթակետում նշված դեպքերում՝ Երևանի քաղաքապետին ուղղված ծառայությունից օգտվողի օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, ծառայությունից օգտվողի ծննդյան կամ անձնագրի պատճենը և (կամ) պաշտպանության ոլորտի իրավասու պետական կամ այլ մարմնի կողմից տրամադրված տեղեկանքի և (կամ) վկայականի և (կամ) տվյալ փաստը հավաստող այլ փաստաթղթերի պատճենները.

2) 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված դեպքերում՝ Երևանի քաղաքապետին ուղղված ծառայությունից օգտվողի օրինական ներկայացուցչի դիմումը, ծառայությունից օգտվողի անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճենը, Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցների (արտադպրոցական դաստիարակության հաստատությունների) տնօրենների կողմից տրված տեղեկանքը՝ արտադպրոցական դաստիարակության հաստատությունում տվյալ երեխայի ուսուցանելու մասին.

3) 1-ին կետի 7-րդ ենթակետում նշված դեպքում՝ սույն որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետում նշված անձանց կողմից Երևանի քաղաքապետին ուղղված դիմումը, որին կցվում են հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակը հավաստող, այդ թվում՝ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի որոշման, ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագրի, վարորդական իրավունքի և օրենքով նախատեսված այլ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

4) 1-ին կետի 8-րդ ենթակետում նշված դեպքում՝ սույն որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետում նշված անձանց կողմից Երևանի քաղաքապետին ուղղված դիմումը, որին կցվում են ավտոտրանսպորտային միջոցի սեփականության վկայականի կամ ավտոտրանսպորտային միջոցն օրինական այլ հիմքով տիրապետելու հանգամանքը հաստատող փաստաթղթերի, տեխնիկական անձնագրի պատճենները.

3. Երևան քաղաքի ավագանու **2014** թվականի հունիսի **24**-ի «Ավտոկայանատեղի վճարի վճարման արտոնություն սահմանելու, Երևան քաղաքի ավագանու **2012** թվականի դեկտեմբերի **25**-ի **N 561**-Ն և դեկտեմբերի **25**-ի **N 563**-Ն որոշումներում լրացումներ, **2013** թվականի դեկտեմբերի **10**-ի **N 89**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» **N 190**-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) վերնագրից հանել «Ավտոկայանատեղի վճարի վճարման արտոնություն սահմանելու,» բառերը.

2) ուժը կորցրած ճանաչել 1-ին և 2-րդ կետերը:

4. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու **2017** թվականի փետրվարի **14**-ի «Ավտոկայանատեղի տեղական վճարի գծով արտոնություն սահմանելու մասին» **N 675**-Ն որոշումը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **63** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **60**, դեմ՝ **3**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

19. ԼՍԵՑԻՆ- Երևան համայնքում տեղական տուրքերի **2018** թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

«Երևան համայնքում տեղական տուրքերի **2018** թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարց ուղղեց.

1. Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցի կապակցությամբ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքում տեղական տուրքերի **2018** թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու **3** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Արայիկ Հարությունյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

2. Սոննա Աղեկյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

3. Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Ամփոփիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

ՈՐՈՇՎԵՑ – **1.** Սահմանել Երևան համայնքում (այսուհետ՝ Երևան) տեղական տուրքերի **2018** թվականի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև **300** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև **200** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **75000** /յոթանասունհինգ հազար/ դրամ.

բ. սույն կետի **1**-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- **200**-ից մինչև **500** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **150000** /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ,

- **500**-ից մինչև **1000** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **250000** /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ,

- **1000**-ից մինչև **3000** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **350000** /երեք հարյուր հիսուն հազար/դրամ.

- **3000**-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **700000** /յոթ հարյուր հազար/ դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև **20** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **15000** /տասնհինգ հազար/ դրամ.

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **25000** /քսանհինգ հազար/ դրամ:

2) Երևանի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրքը սահմանվում է՝ **15000** /տասնհինգ հազար/ դրամ:

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի "ա" ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով:

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն որոշման իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) Երևանի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է **25000** /քսանհինգ հազար/ դրամ:

4) Երևանի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ գոտիավորման, տեղական տուրքը սահմանվում է՝ համաձայն N1 հավելվածի:

5) Երևանի վարչական տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ գոտիավորման, տեղական տուրքը սահմանվում է՝ համաձայն N 2 հավելվածի ,

6) Երևանի վարչական տարածքում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին Երևանի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ **500** /հինգ հարյուր/ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

7) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է՝ **350000** /երեք հարյուր հիսուն հազար/ դրամ:

8) խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է **87500** /ութսունյոթ հազար հինգ հարյուր/ դրամ:

9) համայնքային կանոններին համապատասխան հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար

տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ գոտիավորման, սահմանվում է համաձայն N 3 հավելվածի:

10) Երևանի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առ ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է՝ **50000** /հիսուն հազար/ դրամ:

11) Երևանի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը **24.00**-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ **87500** /ութսունյոթ հազար հինգ հարյուր/ դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **175000** /մեկ հարյուր յոթանասունհինգ հազար/ դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **875000** /ութ հարյուր յոթանասունհինգ հազար/ դրամ.

դ. խաղատների համար՝ **1750000** /մեկ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար/ դրամ.

ե. շահումով խաղերի համար՝ **875000** /ութ հարյուր յոթանասունհինգ հազար/ դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ **262000** /երկու հարյուր վաթսուներկու հազար/ դրամ.

12) Երևանի վարչական տարածքում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է՝ **1** տնային կենդանի պահելու համար **5000** /հինգ հազար/ դրամ.

13) Երևանի ավագանու սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը, ըստ գոտիավորման, սահմանվում է՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև **20** ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝

- Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքում՝ **2500** /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

- Նոր Նորք վարչական շրջանի տարածքում՝ **2500** /երկու հազար հինգ հարյուր/ դրամ. (Մյասնիկյան պող.՝ **3500** /երեք հազար հինգ հարյուր) դրամ

- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում՝ **3000** /երեք հազար/դրամ. (Իսակովի պող., Էջմիածնի խճ., Զվարթնոց օդանավակայան՝ **3500** /երեք հազար հինգ հարյուր/ դրամ)

- Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների տարածքում՝ **3500** /երեք հազար հինգ հարյուր/ դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը **20** և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝

- Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքում՝ **4000** /չորս հազար/ դրամ.

- Նոր Նորք վարչական շրջանի տարածքում՝ **4000** /չորս հազար/ դրամ. (Մյասնիկյան պող.՝ **7000** /յոթ հազար/ դրամ)

- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում՝ **4000** /չորս հազար/ դրամ. (Իսակովի պող., Էջմիածնի խճ., Զվարթնոց օդանավակայան՝ **7000** /յոթ հազար/ դրամ)

-Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների տարածքում՝ **7000** /յոթ հազար/ դրամ.

գ. այլ արտաքին գովազդի համար՝

- Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքում՝ **2000** /երկու հազար/ դրամ.

- Նոր Նորք վարչական շրջանի տարածքում՝ **2000** /երկու հազար/ դրամ. (Մյասնիկյան պող.՝ **2625** /երկու հազար վեցհարյուր քսանհինգ/ դրամ).

- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում՝ **2200** /երկու հազար երկու հարյուր /դրամ. (Իսակովի պող., Էջմիածնի խճ., Զվարթնոց օդանավակայան՝ **2625** /երկու հազար վեց հարյուր քսանհինգ/ դրամ).

- Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների տարածքում՝ **2625** /երկու հազար վեց հարյուր քսանհինգ/ դրամ:

դ. սոցիալական գովազդի համար՝ **0** /զրո/ դրամ:

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ Երևանի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս սահմանված տուրքի **25 %**-ի չափով:

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ Երևանի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս սահմանված տուրքի **10 %**-ի չափով:

14) Երևանի խորհրդանիշները (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է՝ **200000** /երկու հարյուր հազար/ դրամ:

15) Երևանի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար սահմանվում է՝ **10000** /տաս հազար/ դրամ:

16) Երևանի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է՝

ա. **3** հա-ից մինչև **5** հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **5000000** /հինգ միլիոն/ դրամ:

բ. **5** հա-ից մինչև **7** հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **10000000** /տաս միլիոն/ դրամ:

գ. **7** հա-ից մինչև **10** հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **14000000** /տասնչորս միլիոն/ դրամ:

դ. **10** հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **20000000** /քսան միլիոն/ դրամ:

17) Երևանի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է **1500000** /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ:

2. Սահմանել, որ.

1) տեղական տուրք վճարողների գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային ձևով (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով):

2) Երևանի կողմից մատուցվող ծառայությունների (թույլտվությունների տրամադրման) համար տեղական տուրքը գանձվում է նախքան սույն որոշմամբ սահմանված գործողությունների կատարումը (վավերացումը) և (կամ) թույլտվությունների տրամադրումը կամ համայնքային ծառայությունների մատուցումը:

3) սույն որոշմամբ սահմանված թույլտվությունների տրամադրումը կամ գործողությունների կատարումը կարող է մերժվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դրանց տրամադրման համար նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու և (կամ) տեղական տուրքի գումարը չվճարելու դեպքում:

3. Երևանի քաղաքապետին՝ ապահովել տեղական տուրքերի դրույքաչափերի, վճարման կարգի և ժամկետների, ամսվա ընթացքում տեղական տուրքերի յուրաքանչյուր տեսակի մասով փաստացի ստացված եկամուտների, ինչպես նաև Երևանի ավագանու սահմանած արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ իրազեկումն Երևանի պաշտոնական համացանցային www.yerevan.am կայքում:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **63** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **60**, դեմ՝ **3**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

20. ԼՍԵՑԻՆ- Երևանի զարգացման **2018** թվականի ծրագրի հաստատման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու **6** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Մերգեյ Ղաիրամանյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
2. Արայիկ Հարությունյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
3. Ալեն Սիմոնյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
4. Անի Սամսոնյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
5. Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար
6. Անի Խաչատրյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «Երևանի զարգացման **2018** թվականի ծրագրի հաստատման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու **2** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Սոննա Աղեկյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
2. Մարինա Խաչատրյան- Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևանի զարգացման **2018** թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշմամբ հաստատված Երևանի զարգացման **2018** թվականի ծրագիրը ենթակա է հրապարակման «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի **56**-րդ և **63**-րդ հոդվածներով սահմանված կարգով, իսկ ծրագրի հիմնական ցուցանիշները, վիճակագրական և գրաֆիկական տվյալները նաև առանձին տեղեկատուներով և գրքույկներով՝ ընդհանուր **1000** տպաքանակներով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **63** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **47**, դեմ՝ **16**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

21. ԼՍԵՑԻՆ- Երևան քաղաքի **2018** թվականի բյուջեի մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու **8** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Սոննա Աղեկյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
2. Մարինա Խաչատրյան- Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
3. Արայիկ Հարությունյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
4. Անի Սամսոնյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
5. Հարություն Բաբայան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
6. Անի Խաչատրյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
7. Ալեն Սիմոնյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
8. Զարուհի Բաթոյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի **2018** թվականի բյուջեի մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Հարակից գեկույցով հանդես եկավ ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ենոք Ազարյանը:

«Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 9 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Սոննա Աղեկյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

2. Մարինա Խաչատրյան- Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

3. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար

4. Թեհմինա Վարդանյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

5. Սերգեյ Ղահրամանյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

6. Անի Սամսոնյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

7. Արայիկ Հարությունյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

8. Զարուհի Բաթոյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

9. Նատալյա Լափաուրի- Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ

Ամփոփիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել՝

1) Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեն՝

ա) եկամուտների գծով՝ **80,189,969.8** հազ. դրամ,

բ) ծախսերի գծով՝ **80,237,969.8** հազ. դրամ,

գ) դեֆիցիտը (պակասուրդը) **48,000.0** հազ. դրամ:

2) Երևանի 2018 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերի եկամուտներն՝ ըստ ձևավորման աղբյուրների՝ համաձայն N 1 հավելվածի.

3) Երևանի 2018 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումներն՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ համաձայն N 2 հավելվածի.

4) Երևանի 2018 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N 3 հավելվածի.

5) Երևանի 2018 թվականի բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն N4 հավելվածի.

6) Երևանի 2018 թվականի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն N 5 հավելվածի.

7) Երևանի 2018 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N6 հավելվածի.

8) Սույն որոշման N 6 հավելվածով հաստատված հատկացումների վերծանումը՝ ըստ Երևանի վարչական շրջանների և Երևանի քաղաքապետարանի (առանց Երևանի վարչական շրջանների)՝ համաձայն N 7 հավելվածի:

2. Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից «Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման երկրորդ ծրագրի (պատվիրակված լիազորություններ)» ծրագրի իրականացման համար հատկացնել համապատասխանաբար **5,684,507.1** հազար դրամ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ծախսեր» հոդվածով:

3. Թույլատրել Երևանի քաղաքապետին սահմանել սույն որոշմամբ հաստատված.

1) առողջության ապահովագրության ծրագրով նախատեսված ծառայությունների ցանկը, շահառուների որոշման չափորոշիչները և իրականացման կարգը,

2) բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման դրամաշնորհների և սուբսիդիաների համար նախատեսված հոդվածներով հատկացումների վերծանումը ըստ ստացող կազմակերպությունների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 63 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 47, դեմ՝ 16, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

22. ԼՍԵՑԻՆ- Երևան քաղաքի ավագանու **2016** թվականի դեկտեմբերի **21**-ի **N637**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետի տեղակալ Վահե Նիկոյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2016** թվականի դեկտեմբերի **21**-ի **N637**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ **ՈՐՈՇՎԵՑ** – **1.** Երևան քաղաքի ավագանու **2016** թվականի դեկտեմբերի **21**-ի «Երևան քաղաքի **2017** թվականի բյուջեի մասին» **N 637**-Ն որոշմամբ հաստատված.

1) Եկամուտների գումարը նվազեցնել **7,724,941.9** հազար դրամով,

2) ծախսերի գումարը նվազեցնել **7,724,941.9** հազար դրամով:

2. Երևան քաղաքի ավագանու **2016** թվականի դեկտեմբերի **21**-ի «Երևան քաղաքի **2017** թվականի բյուջեի մասին» **N 637**-Ն որոշմամբ հաստատված **NN 1, 2, 3, 6** և **7** հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար **NN 1-5** հավելվածների:

3. Երևան քաղաքի ավագանու **2016** թվականի դեկտեմբերի **21**-ի «Երևան քաղաքի **2017** թվականի բյուջեի մասին» **N 637**-Ն որոշման **2**-րդ կետի «**6,900,852.4** հազար դրամ» բառերը փոխարինել «**8,827,092.6** հազար դրամ» բառերով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **62** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **59**, դեմ՝ **3**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

23. ԼՍԵՑԻՆ- Երևանի քաղաքապետարանի և եվրոպական ներդրումային բանկի միջև «Երևանի էներգաարդյունավետության» ֆինանսական պայմանագիրը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետի տեղակալ Վահե Նիկոյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու **2** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Անի Սամսոնյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

2. Արայիկ Հարությունյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ազարյանը տեղեկացրեց, որ «Երևանի քաղաքապետարանի և եվրոպական ներդրումային բանկի միջև «Երևանի էներգաարդյունավետության» ֆինանսական պայմանագիրը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու **2** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Սոննա Աղեկյան- Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

2. Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Ամփոփիչ էլոյթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև **2017** թվականի դեկտեմբերի **1-ին** ստորագրված «Երևանի էներգաարդյունավետության» ֆինանսական պայմանագիրը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **60** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **57**, դեմ՝ **3**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

24. ԼՍԵՑԻՆ- Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և զանձման վարչության պետ Արմեն Հարությունյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սահմանել գույքահարկի գծով արտոնություն սույն որոշման **2-րդ** կետում նշված անձանց սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքում հաշվառված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ Երևան քաղաքում հաշվառված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող այն բնակելի նշանակության շինությունների մասով, որտեղ հաշվառված են (այդ թվում՝ փաստացի) սույն որոշման **2-րդ** կետում նշված անձինք՝ նվազեցնելով արտոնություն սահմանելու օրվա դրությամբ գույքահարկի գծով առկա հարկային պարտավորությունները:

2. Սույն որոշմամբ սահմանված գույքահարկի գծով արտոնությունները տարածվում են՝

1) Հայրենական մեծ պատերազմի վետերանների,

2) Արցախյան և Աֆղանստանի պատերազմներում զոհվածների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում վիրավորված և ստացած վնասվածքներից՝ հաջորդող տարիների ընթացքում, մահացածների ընտանիքների,

3) Արցախյան և Աֆղանստանի պատերազմների **1-ին** և **2-րդ** խմբի զինհաշմանդամների վրա, որոնք գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունները ձեռք են բերել կամ դրանցում հաշվառվել են մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը:

3. Գույքահարկով հարկվող բնակելի նշանակության մեկից ավելի շինությունների առկայության դեպքում սույն որոշումը տարածվում է այդ շինություններից մեկի նկատմամբ՝ ըստ գույքահարկի արտոնություն ստացած անձի կամ նրա ընտանիքի ցանկության:

4. Այն անձինք, որոնք կհրաժարվեն սույն որոշմամբ սահմանված գույքահարկի գծով արտոնություններից, այդ մասին Երևանի քաղաքապետին գրավոր հայտնելու դեպքում արտոնությունները ճանաչվում է չսահմանված:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **59** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **59**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է միաձայն

25. ԼՍԵՑԻՆ- Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետ Արմեն Հարությունյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Թեհմինա Վարդանյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հայաստանի նկարիչների միության անդամ նկարիչներին սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող շինությունների մասով (ստեղծագործական արվեստանոցներ) տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ **1882672** /մեկ միլիոն ութ հարյուր ութսուններկու հազար վեց հարյուր յոթանասուններկու/ ՀՀ դրամ գումարի չափով՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 60 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 60, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

26. ԼՍԵՑԻՆ- «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամի նվիրաբերության առաջարկին հավանություն տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զավեն Առաքելյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Սերգեյ Ղահրամանյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

2. Ալեն Սիմոնյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

3. Մարինա Խաչատրյան- Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

4. Տիգրան Ավինյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե.Ազարյանը տեղեկացրեց, որ ««Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամի նվիրաբերության առաջարկին հավանություն տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հավանություն տալ Երևան քաղաքի **2800**-ամյակին նվիրված՝ «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամի՝ Երևան քաղաքի Ա.Մյասնիկյանի արձանի ետնամասում գտնվող Իտալիայի, Բելրուսի, Խորենացու և Գ.Լուսավորչի փողոցների սահմաններով պարփակված այգու բարեկարգման նպատակով իրականացվելիք շինարարական, այդ թվում՝

շատրվանների կառուցման աշխատանքների արդյունքը Երևան համայնքին նվիրաբերելու առաջարկին:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամի հետ կնքել նվիրաբերության պայմանագիր՝ հետևյալ հիմնական պայմանների ներառմամբ.

1) Նվիրաբերությունն իրականացվում է որպես բարեգործություն, նվիրաբերության նպատակն է Երևան քաղաքի **2800**-ամյակին նվիրված բարեկարգ այգին (այսուհետ՝ Այգի) բացառապես հանրության հանգստի համար ծառայեցնելը.

2) Այգին առնվազն **99** տարի պետք է հանդիսանա համայնքի սեփականությունը և ծառայի նվիրաբերության պայմանագրով նախատեսված նվիրաբերության նպատակին.

3) շինարարական և բարեկարգման աշխատանքները «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամը պարտավորվում է իրականացնել մինչև **2018** թվականի սեպտեմբերի **25**-ը, իսկ Երևան համայնքը պարտավորվում է ընդունել դրանք՝ նվիրաբերության պայմանագրին համապատասխան.

4) շինարարական և բարեկարգման աշխատանքները, ներառյալ՝ նախագծման աշխատանքները, իրականացվում են «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամի հաշվին՝ վերջինիս ընտրած կապալառուների միջոցով.

5) «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամը պարտավորվում է.

ա. Երևան համայնքին հանձնել Այգու ճարտարապետական-ստրուկտուրական նախագծերը և ինժեներական ցանցերի սխեման:

բ. իր միջոցների հաշվին իրականացնել այգու շատրվանների ինժեներական և տեխնիկական սպասարկումը, սարք-սարքավորումների խոտանման դեպքում՝ դրանց վերականգնումը և/կամ փոխարինումը նորով, վնասված սալերի փոխարինումը և/կամ վերանորոգումը, ինչպես նաև կանաչ գոտիների խնամքն ու սպասարկումը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **61** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **61**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է միաձայն

27. ԼՍԵՑԻՆ- «Տոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե.Ազարյանը տեղեկացրեց, որ «Տոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու **3** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար

2. Սոննա Աղեկյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

3. Մարինա Խաչատրյան- Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – Թույլատրել «Տոր» ՍՊԸ-ին սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **59** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **46**, դեմ՝ **13**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

28. ԼՍԵՑԻՆ- «Ալեքս Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղեր կազմակերպելու իրավունք տալու մասին:

ՋԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու **2** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Սերգեյ Ղահրամանյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

2. Թեհմինա Վարդանյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հ. Նավասարդյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե.Ազարյանը տեղեկացրեց, որ «Ալեքս Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղեր կազմակերպելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Սերգեյ Ղահրամանյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – Թույլատրել «Ալեքս Հոլդինգ» ՍՊԸ-ին սույն որոշման հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղեր:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **59** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **46**, դեմ՝ **13**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

29. ԼՍԵՑԻՆ- «Զեթ էյ ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

ՋԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարց ուղղեց.

1. Սերգեյ Ղահրամանյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե.Ազարյանը տեղեկացրեց, որ «Զեթ էյ ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – Թույլատրել «Զեթ էյ ինվեստ» ՍՊԸ-ին սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **58** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **46**, դեմ՝ **12**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Ղեկավարվելով Երևանի ավագանու կանոնակարգի 105-րդ կետով՝ Երևանի քաղաքապետ S. Մարգարյանը առաջարկեց նիստի ժամանակը սպառվելու պատճառով, օրակարգում ընդգրկված հարցերը քննարկելու նպատակով ավագանու որոշմամբ երկարաձգել նիստի տևողությունը.

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 58 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 58, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

30. ԼՍԵՅԻՆ-Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե.Ազարյանը տեղեկացրեց, որ «Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված անձանց՝ 2018 թվականի ընթացքում շարունակելու հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 58 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 46, դեմ՝ 12, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի՝ որոշվեց Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 1-ին նիստը գումարել 2018 թվականի փետրվարի 13-ին, ժամը 11.00-ին:

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 17.20-ին:

Երևանի ավագանու անդամների բանավոր հարցերին տրվեցին պատասխաններ /սղագրությունը կցվում է/:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

S. ՄԱՐԳԱՐՅԱՆ